

Ազգային

ԽԳ. ՏԱՐԻ ԹԻ 2345 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 18 ՅՈՒԼԻՍ 2022
• VOL. XLIII, NO 2345 • LUNDI, 18 JUILLET 2022 • MONDAY, JULY 18, 2022



Entrusted for over 25 years

Journey Home™ coverage included with new pre-arrangement contracts* (\$595 value)

www.komitas.ca (514) 331-0400

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆ ՀԵՌԱԽՕՍԱԶՐՈՅՑ ՈՒՆԵՑԱԾ Է ԷՐՏՈՂԱՆԻ ՀԵՏ



Վարչապետ Նիկոլ Փաշինեան հեռախօսազրոյց ունեցած է Թուրքիոյ Նախագահ Ռեճեպ Թայյիպ Էրտողանի հետ:

Երկու երկիրներու ղեկավարները ընդգծած են հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին կարեւորութիւնը, ինչ որ պիտի նպաստէ նաեւ տարածաշրջանին մէջ խաղաղութեան եւ կայունութեան ամրապնդման, շնորհաւորած են միմեանց Ատհայի եւ Վարդավառի տօներուն առթիւ:


Փաշինեան եւ Էրտողան տեղի ունեցած հեռավար զրոյցին մէջ ակնկալիք յայտնած են, որ Յուլիս 1-ին իրենց երկիրներու յատուկ ներկայացուցիչներու հանդիպման ժամանակ ձեռք բերուած պայմանաւորութիւնները շուտ կեանքի կը կոչուին: Հայաստանի եւ Թուրքիոյ յատուկ ներկայացուցիչները վերջին հանդիպման հետեւանքով հասած են պայմանաւորութեան երկու հարեան երկիրներու սահմանը բանալ երրորդ երկիրներու քաղաքացիներու համար, ինչպէս նաեւ Թուրքիա-Հայաստան եւ հակառակ ուղղութեամբ բեռնափոխադրումներ իրականացնել՝ օդային ճանապարհով:

Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ ցամաքային սահմանը փակ է 1993 թուականէն:

Հայ-թրքական կարգաւորման գործընթացը առարկայական փուլ մտաւ անցեալ տարեվերջին, երբ կողմերը բանակցութիւններ սկսելու համար յատուկ ներկայացուցիչներ նշանակեցին:

ԱՃ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԸՆԴՊԻՍԱԴԻՐ ՊԱՏՎԱՍԿՈՒՄՆԵՐԸ ԼԻԱԶՕՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԶՐԿԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ԴՐԱԾ Է ՇՐՋԱՆԱՌՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ազգային ժողովի Խորհուրդը որոշման նախագիծ դրած է շրջանառութեան մէջ, որուն համաձայն՝ կը նախատեսեն դիմել Սահմանադրական Դատարան ընդդիմադիր «Հայաստան» եւ «Պատիւ Ունեմ» խմբակցութիւններու պատգամատրները լիազօրութիւններ զրկելու հարցով:



Աճ Խորհուրդի որոշման նախագիծին համաձայն՝ պատգամատրներու ցանկին մէջ կը բացակային «Պատիւ Ունեմ» խմբակցութեան քոթայով խորհրդարան անցած Թագուի Թովմասեանի ու Իշխան Զաքարեանի անունները:

Իշխան Զաքարեանը աւելի վաղ յայտարարած էր «Պատիւ Ունեմ» խմբակցութեանն դուրս գալու մասին:

Ի դէպ, ցուցակին մէջ չկայ նաեւ Մարտուն Գրիգորեանի անունը, որ պատգամատրական լիազօրութիւն ստացած է Արթուր Վանեցեանի՝ հրաժարական տալէն յետոյ՝ Յունիս 30-ին:

Գրիգորեան ընդգրկուած է «Պատիւ Ունեմ» խմբակցութեան կազմին մէջ:

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ՝ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԵՒՈՅ ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԵՆ ԿԱԽՈՒԱԾ Է ՁԵՌՔ ԲԵՐՈՒԱԾ ՊԱՅՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ»

Հայաստանի եւ Թուրքիոյ յատուկ ներկայացուցիչները վերջին հանդիպման արդիւնքներով հասած են պայմանաւորութեան՝ Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիոյ միջեւ սահմանը բանալ երրորդ երկիրներու քաղաքացիներուն համար եւ Թուրքիա-Հայաստան եւ հակառակ ուղղութեամբ բեռնափոխադրումներ իրականացնել օդային ճանապարհով: Այս մասին Յուլիս 7-ին կայացած կառավարութեան նիստին ըսաւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան:



«Հիմա շատ կարեւոր է, որպէսզի մեր գերատեսչութիւնները Թուրքիայի համապատասխան գերատեսչութիւնների հետ աշխատեն, որովհետեւ քաղաքական պայմանաւորութիւնը պայմանաւորութիւն է, բայց այդ աշխատանքից է կախուած դրանց իրագործումն ու իմ յանձնարարութիւնն է, որպէսզի համագործակցուած աշխատենք՝ հնարաւորինս շուտ իրագործելու համար ձեռք բերուած պայմանաւորութիւնները», ըսաւ ան:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԳԱՆԱՏԱՅԻ ԴԵՍՊԱՆՈՒԹԻՒՆ ԲԱՆԱՌՈՒ ՈՐՉՈՒՆԵԼԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՆՍՊԱՏԵԼԻ ՄՊԱՌՆԱԼԻՔԸ

Երբ համաշխարհային քաղաքական պայմանները բնականոն վիճակի մէջ գտնուին, ինքնիշխան մէկ երկրի մը ուրիշ բարեկամ ինքնիշխան երկրի մը մօտ զինք ներկայացնող դեսպանութիւն հաստատելու որոշումը կարելի չէ այլ ձևով մեկնաբանել քան ողջունելով դիմաւորել:

Խօսքը այս անգամ վերնագրին մէջ յիշուած՝ մօտ շաբաթ մը առաջ Հայաստանի մէջ Գանատայի դեսպանութիւն հաստատելու որոշման կը վերաբերի:

Նուազագոյնը անհաճոյ անակնկալ մըն էր Ռուսաստանի հակազդեցութիւնը այս լուրին եւ անոր տուած այնքան մեծ կարևորութեան: Այս անակնկալ սպառնալիքը կատարած է Նոյն ինքն Երևանի մէջ Ռուսաստանի դեսպանը: Արդարեւ, եթէ Նոյնիսկ ներկայ քաղաքական դաժան մթնոլորտին մէջ ակնկալելի ըլլայ Ռուսաստանի անհանգստութիւնը Արևմուտքի որևէ նախաձեռնութեան նկատմամբ, այս պարագային իր սպառնական ճնշումը պէտք էր հասցեագրեր ուղղակի Նոյն ինքն նախաձեռնող Գանատային եւ ոչ թէ ակնյայտօրէն իրմէ կախուածութիւն ունեցող կրտսեր դաշնակից Հայաստանին:

Կարևոր է այստեղ յիշեցնել թէ Հայաստանի մէջ Գանատական դեսպանատան հաստատուիլը, անկախաբար այսօրուան միջազգային քաղաքական ձգտուած վիճակէն, առաւելապէս արդիւնքն է բազմաթիւ տարիներու կառուցողական մեծ աշխատանքի մը:

Հայաստանի հանրապետութիւնը ունի երեսուն տարիներ է ի վեր հաստատուած աշխոյժ դեսպանութիւն մը Գանատայի մէջ: Սօտ երեք տարիներ է ի վեր, Գանատայի մօտ Հայաստանի Արտակարգ եւ Լիազօր Դեսպանն է յատկապէս Նրբաճաշակ եւ հաղորդական անհատականութեամբ՝ վեմաշուք տիկին Անահիտ Յարութիւնեանը որ մշտապէս կառուցողական յարաբերութիւններ կը մշակէ Գանատայի համապատասխան շրջանակներուն հետ:

Ի դէպ, ինչպէս բոլորին համար յայտնի իրականութիւն է, Գանատայի մէջ՝ աւելի քան վեց տասնամեակներ է ի վեր հաստատուած Նոր սակայն բացառաբար աշխոյժ հայ գաղութ մը:

Բացի գաղութային կրթական, մշակութային, եկեղեցական, հայ քաղաքական հարուստ կառոյցներու ցանց մը իրականացնելէ, գանատահայերը նաև լրջօրէն մասնակից են իրենց որդեգրած երկրին քաղաքական կեանքին եւ մշակած են անմիջական ու ջերմ յարաբերութիւններ քաղաքական բարձրագոյն շրջանակներու հետ:



ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐԷՒԱ ԲԱՆԱԿԳՈՒԹԵԱՆՑ ԵՐԷՆ ՈՒ ԱՆԵԼԸ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հայաստան-Թուրքիա բանակցութեան չորրորդ նիստէն վերջ վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտարարեց. «հիմա շատ կարեւոր է, որ մեր գերատեսչութիւնները Թուրքիոյ համապատասխան գերատեսչութիւններին հետ աշխատեն, որովհետեւ այդ աշխատանքից է կախուած պայմանաւորուած իրագործումը: Իմ յանձնարարութիւնն է համադրուած (կոորտինացուած) աշխատանք, որ հնարաւորինս շուտ կարողանանք իրագործել ձեռք բերուած պայմանաւորութիւնները»:

Իսկ Հայաստանի տնտեսութեան (էկոնոմիկա) նախարար Վահան Քերոբեան ասելով. «հիմա մենք ըստ էութեան Հայաստանը փակուողոց դարձնում ենք խաչմերուկ»:

Սակայն, այս բանակցութեան նկատմամբ կարծիքները միատեսակ չեն, կան բազմաթիւ հարցականներ որոնք կը մնան անպատասխան: Օրինակ, հարցականի տակ է թէ իսկապէս բանակցութիւնները կ'ընթանան առանց նախապայմաններո՞ւ թէ՛ որոշ նախապայմաններով. հարցականի տակ կը շարունակէ մնալ նաեւ արհեստավարժ ձեռնհասութիւնը Հայաստանի կողմէ բանակցող Ռուբէն Ռուբինեանի. չորրորդ հանդիպումէն վերջ ձեռք ձգուած արդիւնքը՝ սահմանը բանալ երրորդ երկիրներու քաղաքացիներուն կը մնայ իբրեւ թնճուկ:

Հայաստան երեք տասնամեակէն ի վեր կը գտնուի շրջափակման ներքեւ, հետեւաբար ոեւէ տրամաբանող հայ համամիտ պիտի ըլլար բանակցութեանց՝ եթէ անոնց արդիւնքը պիտի նշանակէր շրջափակման վերացումը:

Հայաստանի մէջ ոեւէ քաղաքական հարց կը դիտուի երկրին մէջ յառաջացած բեւեռացման պրիսմակէն: Նոյնիսկ կենաց-մահու խնդիրներ կ'առնչուին Փաշինեանի ի նպաստ թէ՛ դէմ ըլլալու հարցականին: Այդ իմաստով ալ իշխանութիւնն ու իշխանամետ մամուլը փրկարար լաստի հանգամանք կը վերագրեն այս բանակցութեանց, իսկ ընդդիմադիրներն ալ կը գործածեն զանոնք իբրեւ իշխանութիւնները խժժելու միջոց:

Նետեաբար, դժուար է, եթէ ոչ՝ անկարելի, այս յոյժ կարեւոր բանակցութիւնները դուրս բերել բեւեռացման այս պարունակէն եւ դիտել զանոնք իրենց ինքնարժէքով, իրենց քաղաքական, պատմական եւ իրաւական տարողութեամբ:

Պետք է յիշել որ թուրքերը կամովին չձեռնարկեցին այս բանակցութեանց. այլ ընթացք տուին նախագահ Պայտընի առաջարկին. եւ այս բանակցութեանց կը մասնակցին այնպէս՝ ի յոյժ մարդկանց: Ամբողջ այն տարիներուն երբ շրջափակման մէջ էր Հայաստանը, Թուրքիոյ միակ պայմանը այն էր որ Լեռնային Ղարաբաղի հարցը պէտք էր լուծուէր ի նպաստ Ատրպէյճանի: Հիմա որ այդ պայմանը բաւարարուած է՝ սահմանը կը շարունակէ մընալ փակ եւ Անգարա նոր պայմաններ կ'առաջադրէ, հակառակ որ իբր թէ կը մասնակցի բանակցութեանց առանց նախապայմաններու: Եւ Հայաստան այժմ կը փակէ՛ ձեւացնելով որ չի տեսներ Թուրքիոյ կողմէ առաջադրուած այս նոր պայմանները: Բացայայտ երեւոյթը որ Թուրքիա կը բանակցի նախապայմաններով՝ այն է թէ բանակցութեան մէջ իրաքանչիւր քայլափոխ ան կը քննարկէ Ատրպէյճանի իշխանութեանց հետ, որ կը սահմանէ չափազանց ծանր պայմաններ: Բանակցութեանց չորրորդ նիստէն երեք օր առաջ Պաքոյի մէջ կայացած Թուրքիոյ, Ատրպէյճանի եւ Ղազախստանի արտաքին գործոց նախարարներու հանդիպման Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մելուտ Չաուշօղլու յայտարարեց. «Մենք կ'աջակցինք Ձանգեզուրի միջանցքի բացման եւ կ'ուզենք որ ան օր առաջ բացուի»:

Իր հերթին, թուրքազետ Ռուբէն Մելքոնեան կ'ըսէ. «Պրոֆեսիոնալ դիւանագետներին մօտ դառը ժպիտ է առաջացնում այն յայտարարութիւնը, որ Թուրքիան մեզ հետ կարգաւորման գործընթաց է սկսել առանց նախապայմանների: Աւելի ակնյայտ պայմաններ քան դրուած է հայ-թրքական յարաբերութիւնների օրակարգում, երբեւէ չեն եղել: Էրտողանի յայտարարութիւնը, որ մինչեւ չստորագրուի Ատրպէյճանի հետ խաղաղութեան պայմանագիր, Արցախը չձանչցուի Ատրպէյճանի մաս, ոեւէ քայլ չենք առնելու, նախապայմաններ չեն»:

Պարզ է որ Թուրքիա կը բանակցի – կամ ասելի՛ բանակցի կը ձեւացնէ – զիջումներ կորզելու Հայաստանէն: Ան յաջողած է արդէն չեզոքացնել փոխադարձ նախապայմանները հայկական կողմէն, մանաւանդ՝ ցեղաս-



Երգիծակար՝ Թորոյի, յատուկ «Պայքար»-ին

պանութեան ճանաչման հարցը որ պատմական պարտամորիակ մըն է Թուրքիոյ վզին՝ կամովին զանց առնուած է Հայաստանի կողմէ, որովհետեւ Փաշինեան իրապարակաւ կը յայտարարէ որ ցեղասպանութեան հետապնդման հարցը սփիւռքի պարտականութիւնն է:

Այս բանակցութեանց ընթացքին, յաճախ արդիւնքներու մասին առաջին լուրերը կը հասնին թրքական կողմէն, ապա հաստատուելու համար Երեւանէն: Այս գործընթացին մէջ միշտ գլուխ կը ցցէ հարցականը Հայաստանի կողմէ բանակցող Ռուբէն Ռուբինեանի մասնագիտական հմտութեան մասին. ան իր վերջին հանդիպումէն ետք թուրք բանագնաց Սերտար Քըլըչի հետ՝ հարցազրոյց մը ունեցաւ Պետրոս Ղազարեանին հետ եւ իր տուած պատասխանները դպրոցականի սորվուած բանաձեւերու բնոյթն ունենային կարծէք. մանաւանդ երբ հարցազրոյցողը հեզանքով հարցուց թէ իսկապէս առանց նախապայմաններու կը կատարուին բանակցութիւնները, առանց դէմքի մկանի շարժումի՝ տուաւ միեւնոյն պատասխանը:

Այդ ուղղութեամբ Յուլիս 6ին Lur.com-ի մէջ երեւցաւ յօդուած մը զգայացունց վերնագրով, թէ ոչինչ կար զգայացունց, այլ միայն՝ մտահոգիչ կարգադրութիւն մը, ուր մէջբերուած էր վկայութիւնը Լեհաստանի մէջ Հայաստանի նախկին դեսպան Էտկար Ղազարեանի որ վեր կ'առնէր այն փաստը որ բանակցութեանց չորրորդ հանդիպման Ռուբէն Ռուբինեանին ընկերակցած է «իբրեւ նաժիշտ» յայտնի թրքազետ Արսէն Աւագեանը, մինչ այդ դերերը շրջուած պէտք է ըլլային ու կ'աւելցնէ. «Նիկոլ Փաշինեանը չի վստահում պրոֆեսիոնալ դիւանագետներին, իսկ արտասահմանեան առաքելութիւնների գործուղում է իր կնոջը, թիմակից անպիտաններին, իսկ պրոֆեսիոնալներին կարգում է դրանց սպասարձ՝ խախտելով դիւանագիտական սկզբունքներն ու նորմերը, որոնք ոչ մէկ դէպքում անհետեւանք չեն մնում»:

Թէ ուրոշ խստութեամբ բնութագրուած է երեւոյթը, սակայն խորքին մէջ իրական է որ այսօրուան իշխանութիւնը ասելի կը վստահի իրայիններուն քան արհեստավարժ դիւանագետներու: Հայաստան-Թուրքիա բանակցութիւնները այն տեղը չէ որ մենք կրնանք վերաբերուիլ տնավարի որոշումներով:

Յուլիսի մէկին, Հայաստանի եւ Թուրքիոյ բանագնացները հանդիպեցան չորրորդ անգամ ըլլալով: Այս նիստի ընթացքին արձանագրուած է որոշ տեղաշարժ եւ առնուած է երկու որոշում. ի դէպ, այս որոշումները ունին քաղաքական բնոյթ եւ կրնան իրականանալ միայն այն պարագային երբ կողմերը կը դիմեն գործնական քայլերու. ուրեմն արդիւնքներէն առաջինն է «Ննարարու ամենասեղմ ժամկէտի մէջ Հայաստան-Թուրքիա ցամաքային սահմանը հատելու հնարաւորութիւն ապահովել Հայաստան եւ Թուրքիա այցելող երրորդ երկիրներու քաղաքացիներուն համար»: Դժուար է կռահել տրամաբանութիւնը այս որոշման. «Այո, ըսաւ Ռուբինեան յիշեալ հարցազրոյցի ընթացքին, «ոեւէ երկրի քաղաքացի կրնայ հատել հայ-թրքական սահմանը, բացի Հայաստանի ու Թուրքիոյ քաղաքացիներէն»: Ռուբինեան պատասխան մը չունի այդ առեղծուածային որոշման մասին, սակայն վերլուծաբանները յանգած են այն եզրակացութեան որ
Շար. - էջ 9

ՎՐԱՍՏԱՆ Կ'ՈՍՏԱՐԿԷ ԹԻՖԼԻՍԻ ՄԵՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՆԳԱՄՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ

Վրաստան պատրաստ է Թիֆլիսի մէջ կատարելու Ատրպէյճանի եւ Հայաստանի խորհրդարաններու անդամներու հանդիպումը՝ խաղաղ երկխօսութեան նպատակով. համար: «Ռիփորթ»-ի վրացական ծառայութիւնը կը հաղորդէ, որ ԵԱՀԿ-ի խորհրդարանական վեհաժողովի վերջին նիստին յայտարարած է Վրաստանի խորհրդարանի արտաքին յարաբերութիւններու յանձնախումբի նախագահ Նիքոլոզ Սամխարաձէ:

Խօսելով Հարաւային Կովկասի մէջ կայունութեան եւ խաղաղութեան կարեւորութեան մասին՝ յանձնախումբի նախագահը յայտնած է Վրաստանի պատրաստակամութիւնը կայունացնող դեր խաղալու շրջանի մէջ խաղաղութեան ապահովման գործին մէջ:

ԱՊԱԳԵՅ

Շաբաթաթերթ

ABAKA

Hebdomadaire Arménien
Armenian Weekly ISSN 0382-9251

Publié par /Published by
Le Centre de Publication Tékéyan
825 rue Manoogian, Saint-Laurent,
Québec H4N 1Z5

Tél: (514) 747-6680 • FAX: (514) 747-6162
e-mail: abaka@bellnet.ca
www.tekeyanmontreal.ca

Պատասխանատու խմբագիր՝
ՍԷՏԻՍ ՊԱՊՈՒԵԱՆ

Ծանուցումներու
նուիրատուութիւններու եւ
գրասենեակի պատասխանատու՝
ՍԱԼԷՒ ՄԱՐԿՈՍԵԱՆ

Թորոնթոյի պատասխանատու՝
ՄՍՍԱՌ Բ. ՄՍՍՈՒՐԵԱՆ

Canada
2nd Class \$80 (QC & ON)
1ère classe/first class \$150
U.S.A. 1st class (US) \$150
Autres pays/Other countries:
1st class (US)\$120
Per issue \$1.75
Dépôt légal: Bibliothèque du Québec

PM40015549R10945
TPS/GST - R119209294 • TVQ/PST #1006268699

Financé par le gouvernement du Canada
Funded by the Government of Canada

Canada

ՀԱՅԱՍՏԱՆԻ...

Շաբ. - էջ 1- ԷՆ

Տուեալ եւ գիտցուած իրականութիւն է թէ Գանատահայ գաղութը տասնեակ տարիներէ ի վեր, պաշտօնապէս և բարեկամաբար, խնդրանք և պահանջ կը ներկայացնէր Գանատայի պետական բաճրագոյն շրջանակներուն մօտ, որպէսզի ան դեսպանութիւն հաստատէ Երեւանի մէջ:

Ստորեւ, տեղին ըլլալով, կը հրատարակենք գանատահայ գաղութի ծանօթ դեկավար դէմքերէն Դոկտ. Արշաիր Կեօնճեանի, գնահատանքի եւ շնորհակալութեան նամակը այս նիւթին վերաբերեալ ուղղուած Նոյնինքն Գանատայի Արտաքին Գործերու Նախարար Մելանի Ժոլիին, անոր յայտնելով նաեւ գանատահայութեան պատրաստակամութիւնը օգտակար հանդիսանալու Գանատա-Հայաստան կապերու սերտացման:

Եզրակացնելով, այս տեսակի սպառնալիքներու և ճնշման գործածութիւնը Ռուսաստանի կողմէ բոլորովին անտեղի եւ անընդունելի է հայ ժողովուրդին համար: Մենք ընդհակառակն կ'ակնկալենք՝ որպէս դարաւոր գործակից եւ դաշնակից Ռուսիոյ, անոր առաւել բարեացակամ վերաբերմունքը եւ օժանդակութիւնը, այսօր նեղ դրութեան մատնուած բարեկամ երկիր Հայաստանին:

ԱՄԵՆԱՅՆ ԶԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՕՐԻՆԱԾ Է «ՉԵՂԵՄ-Ը ԶԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻՒՈՔ ԿԱՄՈՒՐՁ» ԶԱՄԱՅՅԿԱԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ



Յուլիս 8-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի մէջ ընդունած է եւ իր հայրապետական օրհնութիւնը բաշխած է «ՉԵՂԵՄ-ը Հայաստան-Սփիւռք կամուրջ» համահայկական ուխտագնացութեան մասնակիցներուն՝ կազմակերպուած Հայ Եկեղեցւոյ Համաշխարհային Երիտասարդական Միաւորման (ՉԵՂԵՄ) կեդրոնական գրասենեակին կողմէ:

Յուլիս 6-10 իրականացուած համահայկական ուխտագնացութեան մասնակցած են շուրջ 200 եկեղեցաւեր երիտասարդներ՝ Նուիրապետական Աթոռներէ, Հայրապետական պատուիրակութիւններէ, Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի տարբեր թեմերէ:

Իր խօսքին մէջ, Նորին Սրբութիւնը ուխտաւոր հայորդիներուն բարեմաղթած է Աստուծոյ զօրակցութիւնը՝ անձնական եւ համայնքային կեանքի մէջ Նոր ձեռքբերումներու եւ յաջողութիւններու հասնելու համար, որոնց արգասիքները պիտի ծառայեցնեն հայրենիքին եւ Սուրբ Եկեղեցիին:

Հանդիպման ընթացքին Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ պատասխանած է երիտասարդները յուզող հարցերուն, որոնք կը վերաբերէին Եկեղեցւոյ կեանքին մէջ իրենց ներգրաւուածութեան, առկայ մարտահրաւերներուն եւ անոնց դիմագրաւման:

Աւարտին, Վեհափառ Հայրապետը «Պահպանիչ» աղօթքով իր օրհնութիւնը բաշխած է ներկաներուն:

ՊԱՅՐԱՄՈՎ. «ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ԶՕՐՔԵՐԸ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՇՐՋԱՆՆԵՐԷՆ ՀԵՌԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՀԱՆՁԸ ՄԵՐԺՈՒԱԾ Է»

Ատրպէյճանի արտաքին գործոց նախարար Ճէյհուն Պայրամով յայտարարած է, որ Հայաստանի հետ խաղաղութեան համաձայնագրի շուրջ բանակցութիւններուն մէջ առանձնապէս յարգելի է իրենց ջիւղը: Այս մասին կը հաղորդէ ատրպէյճանական «Մինվաթ» կայքը:



«Չեմ կրնար ըսել, որ Հայաստանի հետ խաղաղութեան համաձայնագրի շուրջ բանակցութիւններուն մէջ որոշակի յարգելի է իրենց ջիւղը կայ: Բայց եւ այնպէս, կան որոշակի պատգամներ, կան քննարկումներ», ըսած է ատրպէյճանցի նախարարը:

Անոր համաձայն, Հայաստանի մէջ այս հարցին մէջ տարբեր կարծիքներ կան: Ըստ Պայրամովի, հայ հասարակութեան մէջ վրէժխնդրական կոչեր կան, կան նաեւ իրարմէ տարբեր կարծիքներ:

«Սակայն մենք կը կարծենք, որ այս ծիրին մէջ հայ հասարակութեան մէջ որոշակի փոփոխութիւններ տեղի ունեցած են: Կը կարծեմ, որ բոլորը պետք է հասկնան, որ երկարաժամկետ խաղաղութիւնն ու շրջանի զարգացումը այլընտրանք չունին», աւելցուցած է Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարը:

Անդրադառնալով սահմանազատման հոլովոյթին՝ ան յայտնած է. «Հաշուի առնելով Հայաստանի հետ յարաբերութիւններու պատմութիւնը՝ ատոր սահմանազատման հասնիլը դիւրին պիտի չըլլայ: Սակայն հոլովոյթին սկսիլը ինքնին արդէն լաւ քայլ է», աւելցուցած է Պայրամով:

Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարը նշած է, որ սահմանազատման յանձնարարութիւնը յաջորդ նիստին օրը տակաւին յայտնի չէ:

Աւարտին յիշենք, որ Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան բանբեր Մարիա Զախարովա յայտնած էր, որ հայ-ատրպէյճանական սահմանի սահմանազատման յանձնարարութիւնը յաջորդ նիստը տեղի պիտի ունենայ Մոսկուայի մէջ:



ՌԱՄՎԱԿԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ, ԷՕԺԷՆ ԲԱԲԱԶԵՆԻ ԱԿՈՒՄԲ, ՄՈՆՔՐԷԱԼ-ԳԱՆԱՏԱ
ORGANISATION DÉMOCRATIQUE LIBÉRALE ARMÉNIENNE DE MONTRÉAL
ARMENIAN DEMOCRATIC LIBERAL ORGANIZATION OF MONTREAL

825 rue Manoogian, St-Laurent, Québec, Canada H4N 1Z5 • Tél.: (514) 747-6680 • Fax: (514) 747-6162

Մոնթրէալ, Յուլիս 4, 2022

Յարգարժան Տիկին Մելանի Ժոլի Արտաքին Գործոց Նախարար Օթաուա, Գանատա

Յարգելի Տիկին Նախարարուհի Ժոլի,

Գնահատանքով եւ ճշմարտօրէն մեծ ուրախութեամբ է որ տեղեկացանք մեր կառավարութեան առած որոշման լուրը Գանատայի դեսպանատուն մը բանալու Երեւանի մէջ, Հայաստան:

Արդարեւ, հակառակ չափազանց դժուարին աշխարհաքաղաքական վիճակներով շրջապատուած ըլլալուն, Հայաստանն ու հայութիւնը կը շարունակեն յառաջապահ դեր մը կատարել ժողովրդավարական արեւմտեան արժէքներու, պահպանելով մարդասիրական արժէքներ՝ աշխարհամասի մը մէջ ուր կը տիրեն անհանդուրժողութիւնն ու բռնութիւնները:

Տակաւին այսօր, դժբախտաբար Հայաստանն ու Արցախը կը դիմագրաւեն սպառնալիքը պատերազմի ներխուժման: Գանատայի դեսպանութեան գոյութիւնը, Երեւանի մէջ, դրապէս պիտի սատարէ ամբողջ շրջանին եւ պիտի հանդիսանայ գոհունակութիւն պատճառող ազդակ մը, մեզի՝ գանատահայերու համար:

Ինչպէս անցեալին բազմիցս շեշտած էինք մեր Գանատայի կառավարութեան՝ կարեւորութիւնը դեսպանատան մը՝ այսօր կու գանք մեր շնորհակալութիւնը յայտնելու այս խոհեմ որոշման համար: Կուզենք Ձեզ վստահեցնել որ Գանատայի հայ համայնքը միշտ պիտի ըլլայ Ձեր տրամադրութեան ներքեւ, անհրաժեշտութեան պարագային իրականացնելու, յօժար կերպով, որեւէ դեր՝ հաղորդակցելու Հայաստանի քաղաքացիական, մշակութային, գիտական կամ այլ շրջանակներու հետ, աւելի եւս արդիւնաւորելու երկկողմանի ճիգերը:

Ակնկալելով հաւանական մօտիկ առիթ մը, այս ուղղութեամբ, փոխարձակ հաղորդակցութեան մը:

Հաճեցէք ընդունիլ, Տիկին Ժոլի, իմ լաւագոյն բարեմաղթութիւններս:

Դոկտ. Արշաիր Կեօնճեան

Գանատայի Պետական Շքանշանակիր Order of Canada
Պատուոյ Նախագահ Գանատայի Հայաստանեայց Եկեղեցւոյ Թեմական Խորհուրդի

Նախկին Նախագահ Ռամկավար Ազատական Կուսակցութեան
Նախկին Փոխ Նախագահ ՀԲԸՄի Վաստակաւոր Անդամ Կեդրոնական Վարչութեան

Պատուոյ Նախագահ Թեքեան Մշակութային Միութեան եւ 'ԱՊԱԳԱՅ' Շաբաթաթերթի

(Բնագիրը \$րանսերէն լեզուով յանձնուած է Նախարարուհի Մելանի Ժոլիի)

ԲԱՅՈՒԵՑԱԲ ԱՄԱԱ-Ի ՍՏԵՓԱՆԱԿԱՆԻ ԿԵԴՐՈՆԻ ՆՈՐ ՇԷՆՔԸ



Հայաստանեայց աւետարանական եկեղեցւոյ (ՀԱԵ) Ստեփանաւանի համայնքի եւ Ամերիկայի Հայ աւետարանչական ընկերակցութեան (AMAA) աշխատակիցներուն համար կրկնակի տօն էր: ՀԱԵ-ի 175-ամեակը տօնելու համար աշխարհի տարբեր ծագերէն Հայաստան ժամանած բարերարները եւ հիրերը, ինչպէս նաեւ ՀԱԵի տարբեր համայնքներու հոգեւոր հովիւները 3 Յուլիսին այստեղ էին՝ ԱՄԱԱ-ի Ստեփանաւանի կեդրոնի նոր շէնքի բացման հանդիսաւոր արարողութեան մասնակցելու համար:

Տանտէրները հիրերը դիմաւորեցին աղուհացով, ապա ելոյթ ունեցաւ ԱՀԱԸ-ի Ստեփանաւանի մասնաճիւղի պարախումբը:

Ներկաները ողջունեց ԱՄԱԱ-ի գործադիր տնօրէն Զաւէն Խանճեան: «Տալը սիրոյ նշան է, կամաւոր կերպով, սիրով տալը, որուն վարձատրութիւնը ուրախութիւն է, երջանկութիւն: Տալը պէտք է ըլլայ լուռ, առանց թմբուկի՝ Աստուած օրհնեղբայրով, Աստուած փառաւորելով եւ ոչ թէ մարդը: Տալու ուրախութիւնը Աստուծոյ գործի քաջալերանքն է, Աւետարանչականի միջոցով կատարուած Աստուծոյ գործը քաջալերելն է: Նուիրատուները միշտ ըսած են, որ «մեր սիրտի փափաքն է Աստուած փառաւորելը: Այս գեղեցիկ շէնքը, զոր այսօր կը նուիրենք եւ կանուանակոչենք պէտք է ծառայէ մանուկներու, երիտասարդներու եւ չափահասներու: Այս գրասենեակը մանուկները պիտի առաջնորդէ դէպի Աստուած», ըսաւ ան:

Խանճեան նաեւ փոխանցեց նուիրատուին հետեւեալ խօսքը. «Ես հպարտ եմ իմ հայկական ծագումով, իմ արմատներով եւ կը գիտակցիմ, որ իմ նախահայրերը շատ հայերու նման անցան դժուար ճանապարհներով, եւ մենք ուրախ ենք, որ յանուն անոնց՝ յիշատակին՝ կը կատարենք այս նուիրատուութիւնը»:

ԱՄԱԱ-ի նախագահ Նազարէթ Տարագճեան իր խօսքը սկսաւ Սաղմոս 127-ով՝ «Եթէ Տէրը չչինէ տունը, զոր տեղ կ'աշխատին անոր շինարարները» եւ շարունակեց ըսելով. «Աստուած այս գեղեցիկ առաւօտը մեզի պարգեւեց, եւ մենք առիթ ունինք երկար սպասումէ ետք այցելելու Ստեփանաւան ու մեր աչքերով տեսնելու այն շէնքը, զոր երկար ժամանակ երազեր ու ծրագրեր էինք: Այսօր մենք կը նուիրենք այս շէնքը Աստուծոյ փառքին համար, եւ մեր աղօթքն է, որ այս կեդրոնը ըլլայ փարոս եւ հրաւիրէ Աստուծոյ բոլոր զաւակները, որ իրեն մօտենան, սորվին իրար սիրել, ինչպէս որ Աստուած սիրեց ամբողջ աշխարհը, մինչեւ որ իր միածին որդին տուաւ, որպէսզի ամէն ոք, որ անոր հաւատայ, չկորսուի, այլ յաւիտեանական կեանք ունենայ: ԱՄԱԱ-ի կողմէ կ'ուզեմ այսօր շնորհաւորել Ստեփանաւան քաղաքի ժողովուրդը՝ այս գեղեցիկ կառոյցին համար: Թող Աստուած այս կեդրոնը օրհնութիւն մը ընէ այս քաղաքին համար: Շնորհակալութիւն այն բոլոր նուիրատուներուն եւ ի մասնաւորի Grille Foundation-ին, որ իրենց նուիրներով կարելի ըրին այս ծրագիրին յաջողութիւնը: Շնորհակալութիւն նաեւ բոլոր անոնց, որոնք քրտնաջան աշխատեցան այս ծրագիրին յաջողութեան համար, ինչպէս՝ Հրաչ Սարգիսին, Զաւէն Խանճեանին, Յարութ Ներսէսեանին եւ Արէն Տէյրմէնճեանին: Այսօր ուրախ օր է Ստեփանաւանի մէջ եւ կը մաղթեմ, որ ձեր բոլոր օրերը ըլլան ուրախ եւ պայծառ»:

Այնուհետեւ պարոնայք Զաւէն Խանճեան եւ Նազարէթ Տարագճեան, իրենց կողակիցներուն՝ Սոնա Խանճեանի եւ Անի Տարագճեանի հետ՝ կտրեցին մուտքի ժապաւենը եւ բոլորին հետ շրջայց կատարեցին նոր գրասենեակի շէնքին մէջ:

Նոր գրասենեակի կառուցման հովանաւորներն են՝ Փիթըր եւ Սոնիք Թորինկթընները եւ իրենց ընտանիքը՝ Ամերիկայէն: Այս մասին վկայող ցուցանակին վրայ, որուն բացումը եւս կատարուեցաւ նոյն օրը, արձանագրուած էր. «Խոնարհ երախտագիտութեամբ առ Աստուած՝ իր անսասան սիրոյ եւ անսահման օրհնութիւններուն համար, մենք հպարտութեամբ կ'ընդունինք մեր հայկական ժառանգութիւնը եւ այս կեդրոնը կը նուիրենք մեր նախապապերու՝ Մարտիրոս եւ Աղանի Նիկողոսեաններու, մեր պապերու՝ Արմենակ եւ Մաթիլտա Օհանեաններու եւ մեր ծնողներուն՝ Ժիրայր եւ Արսինէ Սուսմայեաններու յիշատակին»:

Գրասենեակի շէնքի բացումէն ետք, ՀԱԵ-ի Ստեփանաւանի եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ ՀԱԵ-ի 175-ամեակին նուիրուած «Ամուր պահենք մեր հաւատքը» խորագրուած փառաբանութեան պաշտամունքը:

Անդրանիկ Մարտոյեան ԱՄԱԱ-ի Հայաստանի մասնաճիւղի մամուլի բաժնի քարտուղարն է (Արեւելահայերէնէն արեւմտահայերէնի վերածեց Յակոբ Միքայէլեան)

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԵՒ ԵՍ ՅԱՏՈՒԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՆՊՐԱՂԱՐՁԱԾ ԵՆ ՀԱՐԱԲԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԱՅՈՒՆՈՒԹԵԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱՅՆԵՐՈՒՆ




Վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունած է Հարաւային Կովկասի ու Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ յատուկ ներկայացուցիչ Տոյվօ Կլարիին: Հանդիպմանը ներկայ եղած է նաեւ Հայաստանի մէջ Եւրոպական Միութեան պատուիրակութեան ղեկավար, դեսպան Անդրեա Վիկտորինը: Ինչպէս «Արմէնփրես»-ին կը տեղեկացնեն ՀՀ վարչապետի աշխատակազմէն, վարչապետը բարձր գնահատած է Եւրոպական Խորհրդի նախագահ Շառլ Միշելի ջանքերը՝ տարածաշրջանի մէջ փոխ ըմբռնման ու կայունութեան ամրապնդման ուղղութեամբ:

«Հանդիպումին անդրադարձ կատարուած է Հարաւային Կովկասի տարածաշրջանի մէջ տեղի ունեցող գործընթացներուն, Լեռնային Ղարաբաղի շուրջ իրավիճակին, խաղաղութեան ու կայունութեան ապահովմանը ուղղուած քայլերուն: Մասնաւորապէս, մտքեր փոխանակուած են Սոչիի մէջ ՌԴ նախագահի, Պրիքսէլի մէջ Եւրոպական Խորհրդի նախագահի միջնորդութեամբ կայացած եռակողմ հանդիպումներու արդիւնքներուն ու ձեռք բերուած պայմանաւորութիւններուն իրականացման վերաբերեալ», - ըսուած է հաղորդագրութեան մէջ:

Ըստ աղբիւրին՝ շեշտադրուած է Ատրպէյճանի վերահսկողութեան տակ անցած տարածքներուն հայկական մշակութային ժառանգութեան պահպանութեան ուղղութեամբ միջազգային հանրութեան հետեւողական ուշադրութիւնը, մասնաւորապէս, ԼՂ հակամարտութեան գօտի ԵՌԻՆԷՍՔՕ-ի առաքելութեան ու միջազգային մարդասիրական կազմակերպութիւններու մուտքի ապահովումը՝ հաշուի առնելով արդէն իսկ հայկական մի շարք կոթողներու ոչնչացման ուղղութեամբ իրականացուած քայլերը:

Անդրադարձ կատարուած է նաև հայ-թուրքական համայնաբերութիւններու կարգաւորման գործընթացին:

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵՆԵՆ ՓՐԿՈՒԱԾ ԵՒ ԱՄՆ ԳՎՂԹԱԾ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՄԱՍԻՆ ՊԱՏՄՈՂ ՖԻԼՄՈՎ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ՍԿԻԶԲ ԱՌԱՒ «ՈՍԿԵ ԾԻՐԱՆ» ՓԱՌԱՏՕՆԸ



Հայկական արտադրութեան «Ամերիկացի» ֆիլմի անդրանիկներ կայացումով Յուլիս 10-ին, Երեւանի «Արամ Խաչատրեան» համերգասրահին մէջ, սկիզբ առաւ 19-րդ «Ոսկէ ծիրան» միջազգային փառատօնը: Այս մասին կը հաղորդէ Armenpress.am-ը:

«Ամերիկացի» ֆիլմի բեմադրիչ եւ սենարի հեղինակ Մայքլ Գուրջեան, որ «Էմֆի» եւ «Ոսկէ կլոպուս» մրցանակներու դափնեկիր է, յայտնեց՝ թէ երջանիկ է, որ Հայաստան կը գտնուի: Ան նշեց, որ իր ֆիլմը կը պատմէ տղու մը մասին, որ փրկուած է Հայոց Ցեղասպանութենէն՝ կորսնցնելով ընտանիքը, եւ որ կը փորձէ գտնել իր արմատները:

Բեմադրիչը, որ կ'ապրի ԱՄՆ, նաեւ խոստովանեցաւ, որ համավարակի ընթացքին եղած է Հայաստան եւ շատ վայրերու մէջ ըլլալու հնարաւորութիւն չէ ունեցած, սակայն շատ լաւ կը ճանչնայ Երեւանի կեդրոնը: Այս այցին ընթացքին կը փորձէ իւրովի բացայայտել Հայաստանը, քանի որ կը պատրաստուի աշխատիլ հայկական այլ նախագիծի մը վրայ եւս:

Երեկոյի ընթացքին փառատօնի պատուաւոր «Փարաջանովեան թալեր» մրցանակ յանձնուեցաւ սպանացի բեմադրիչ Ալպերթ Սեռային եւ օսկարակիր բեմադրիչ Թերի Ճորճին: Թերի Ճորճը երրորդ անգամ ըլլալով կը գտնուի Հայաստան, 19-րդ «Ոսկէ ծիրան»-ի պատուաւոր հիւրն է եւ «Լիամեթրաժ ֆիլմերու մրցոյթ»-ի Ժիրիկի նախագահը: Ան մեր երկիր առաջին անգամ եկած է «Խոստումը» ֆիլմին առնչուող աշխատանքներ իրականացնելու համար, յետոյ՝ ֆիլմի անդրանիկ ներկայացման:

ABAKA

SECTION FRANÇAISE

LUNDI, 18 JUILLET 2022

Un travail coordonné est nécessaire dans le processus de normalisation avec la Turquie

Nikol Pachinian a demandé, le 7 juillet dernier, aux agences gouvernementales de coordonner le travail avec la Turquie afin de mettre en œuvre les accords récemment conclus.

Il a rappelé que les envoyés spéciaux des deux pays, Ruben Rubinian et Serdar Kilic, sont parvenus à un accord sur l'ouverture de la frontière terrestre aux citoyens des pays tiers ainsi que le transport aérien de marchandises, lors de pourparlers de normalisation à Vienne le 1er juillet pour un quatrième fois.

« Il est très important que nos agences travaillent avec les agences compétentes de Turquie car la mise en œuvre des accords politiques en dépend », a déclaré Pachinian lors d'une réunion du cabinet.

Il a souligné la nécessité d'efforts coordonnés pour mettre en œuvre les accords dès que possible.



L'Arménie et la Suède s'engagent à élargir leur coopération bilatérale

Les ministres des Affaires étrangères de Suède et d'Arménie ont échangé des lettres de félicitations à l'occasion du 30e anniversaire, le 10 juillet dernier, de l'établissement des relations diplomatiques entre la Suède et la République d'Arménie.

Dans sa lettre, la ministre suédoise des Affaires étrangères, Ann Linde, a exprimé sa profonde appréciation pour l'amitié et la coopération entre les deux pays et l'anticipation d'une bonne relation bilatérale et une coopération continue.

Le ministre arménien des Affaires étrangères, Ararat Mirzoyan, a noté que la coopération bilatérale avait pris de l'ampleur en raison de l'engagement à long terme de la Suède à soutenir et à contribuer aux réformes démocratiques en cours dans le pays. Le ministre a réaffirmé l'engagement de l'Arménie à favoriser la coopération selon divers formats.



L'Arménie et les États-Unis signent un accord de subvention de 120 millions de dollars

Le vice-Premier ministre d'Arménie, Mher Grigorian, et le directeur de mission de USAID pour l'Arménie, John Allelo, ont signé un accord de subvention d'objectifs de développement de 5 ans entre la République d'Arménie et les États-Unis, en vertu duquel une aide de 120 millions de dollars sera accordée à l'Arménie. L'accord vise à renforcer les valeurs démocratiques et à assurer la stabilité économique.

Des représentants de USAID et des institutions étatiques arméniennes étaient présents à la cérémonie de signature. « Au nom du gouvernement et en mon nom person'



Suite à la page 6

Le Président arménien et Noubar Afeyan discutent des perspectives de l'éducation et de la science en Arménie



Le Président de la République d'Arménie Vahagn Khatchaturian a reçu, le 7 juillet, le scientifique et homme d'affaires américano-arménien Noubar Afeyan. Le Président Khatchaturian a accueilli l'invité et a noté qu'il est toujours heureux de le recevoir en Arménie. Noubar Afeyan a remercié le Président pour la réception.

Vahagn Khatchaturian et Noubar Afeyan ont discuté des perspectives de développement de l'éducation et de la science en Arménie. L'homme d'affaires a présenté au Président les initiatives et programmes actuels et futurs visant les domaines mentionnés, ainsi que le renforcement et le développement continu des relations entre l'Arménie et la diaspora.

Un accord a été conclu afin de combiner les efforts pour la mise en œuvre de programmes sociaux et éducatifs à plusieurs niveaux.

Elen Asatrian, élue au conseil municipal de Glendale

Elen Asatrian a été élue au conseil municipal de Glendale, Californie, terminant deuxième dans un groupe de huit candidats et devenant la première immigrante de la ville, la première arméno-américaine et la plus jeune femme à être élue au conseil.

Elle prètera serment le mardi 12 juillet à 20 h dans la salle du conseil de l'hôtel de ville de Glendale.

Elen Asatrian, âgée de 39 ans, a obtenu 13 165 voix, dépassant de loin les anciens maires Ara Najarian et Vrej Agajanian et a battu un record historique à Glendale en recueillant plus de voix que les deux titulaires comme nouvelle venue dans une course sans sièges ouverts.

« Du sud au nord et d'est en ouest, les Glendaliens ont ouvert leurs maisons, leurs petites entreprises et leurs cœurs parce que nous partageons la même vision et le même espoir pour l'avenir de notre ville. Je suis reconnaissante pour votre confiance en moi et pouvoir ainsi être votre voix à l'hôtel de ville et pour votre immense élan de soutien », a déclaré Asatrian. « C'est un honneur d'avoir obtenu un siège qui me permettra de représenter la merveilleuse mosaïque de personnes qui composent Glendale. »

« Il ne devrait pas y avoir autant de premières en 2022. J'espère que cette victoire inspirera et montrera aux femmes et aux filles qu'elles ont une place au gouvernement et en politique. Je m'engage à faire ma part pour aider à ouvrir la voie », a ajouté Asatrian.

Née en Arménie, Elen Asatrian est arrivée à Glendale avec sa famille à l'âge de 10 ans et a fréquenté les écoles Columbus Elementary, Toll Middle et Herbert Hoover. Elle apporte au conseil plus de deux décennies de service auprès de la communauté de Glendale et au-delà, ainsi que son expérience professionnelle dans les domaines de la politique, de la défense des intérêts et des affaires publiques.




La croissance du PIB de l'Arménie devrait atteindre 5 % en 2022

Une équipe du Fonds monétaire international (FMI), dirigée par Iva Petrova, s'est rendue en Arménie du 20 au 24 juin 2022. Les discussions de l'équipe avec les autorités ont porté sur les développements récents, les perspectives économiques et les priorités politiques des autorités qui pourraient sous-tendre un futur programme pris en charge par le FMI.

Suite à la page 6



Importante coopération trilatérale Arménie, Grèce et Chypre



L'Arménie attache une grande importance au format trilatéral de la coopération, a déclaré le ministre arménien des Affaires étrangères Ararat Mirzoyan dans une entrevue au quotidien grec Kathimerini.

« À ce jour, nous avons organisé avec succès plusieurs réunions ministérielles trilatérales. Nous sommes impatients d'accueillir le Sommet des dirigeants de nos trois pays », a-t-il déclaré.

« Nos nations ont une riche expérience de collaboration et de soutien mutuel et nous pensons que nos États ont un énorme potentiel pour promouvoir la stabilité, la sécurité et la paix dans la région, grâce à un dialogue politique et à une coopération renforcés entre l'Arménie, la Grèce et Chypre. Nous reconnaissons également l'importance et l'efficacité de la coopération trilatérale dans les domaines de la défense, de la diaspora, des relations parlementaires, des situations d'urgence, de l'informatique, de la santé, des investissements, du tourisme, de l'éducation et de la culture. Je suis convaincu que le format est destiné à réussir », a-t-il déclaré.

Le ministre des Affaires étrangères a souligné que la Grèce est l'un des partenaires les plus importants de l'Arménie.

« Les relations entre l'Arménie et la Grèce sont fondées sur une histoire et des valeurs millénaires communes, et l'amitié et la solidarité entre nos deux peuples. Au cours des siècles, les Arméniens et les Grecs ont vécu pacifiquement les uns à côté des autres, ont collaboré pour créer de la valeur et de la prospérité et ont combattu ensemble les oppresseurs extérieurs. Dans ce contexte, je tiens à souligner que nous n'oublierons jamais le soutien sans réserve que le peuple grec et le gouvernement ont apporté pendant les périodes très difficiles de l'histoire de notre nation, l'exemple le plus récent étant la guerre de 2020 », a noté le ministre Mirzoyan.

« Cette année, nous célébrons le 30e anniversaire de l'établissement des relations diplomatiques entre nos républiques. Au cours de ces trois décennies, plus de 40 documents ont été signés entre les deux pays et nous avons développé des relations interétatiques et un programme bilatéral solides allant du dialogue politique actif au partenariat dans différents domaines, notamment la défense, l'économie, l'éducation, la culture et de nombreux autres domaines, ainsi qu'une collaboration mutuellement bénéfique sur des plates-formes multilatérales. Au cours de ma récente visite de travail en Grèce, j'ai eu des entretiens très productifs avec la présidente Katerina Sakellaropoulou et le Premier ministre Kyriakos Mitsotakis, ainsi que des discussions approfondies avec mon collègue et bon ami le ministre Nikos Dendias. Nous avons fait des progrès et sommes parvenus à une compréhension commune sur un certain nombre de questions importantes et nous continuerons à travailler pour approfondir davantage nos relations », a déclaré le ministre des Affaires étrangères.

« Je pense que nous devrions réfléchir à l'accroissement de la coopération entre l'Arménie et la Grèce à un niveau nettement supérieur, ce qui pourrait convenir à des partenaires stratégiques. Je suis convaincu que nous devrions travailler dans cette direction dans un avenir proche », a-t-il ajouté.

VISITEZ ABAKA NEWS
www.abakanews.org

L'Arménie...

Suite de la page 5

nel, je tiens à vous remercier pour l'assistance fournie à l'Arménie, soulignant que les orientations fixées par l'accord sont d'une grande importance pour surmonter les défis économiques auxquels l'Arménie est confrontée en cette période difficile, ainsi que le développement durable et le renforcement de la démocratie dans le pays », a déclaré le vice-Premier ministre Mher Grigorian.

